ՆՅՈՒԹԵՐ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՍԱԼՂԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Խ. Ա. ՓՈՐՔՇԵՅԱՆ

«Սալղան» Նոր-Նախիջևանի բարբառում նշանակում է ճարպահալ գործարան, որտեղ ամեն տարի աշնան ամիսներին մորթում էին ամբողջ ամառվա և աշնան ընթացքում հատկապես ճարպի համար գիրացրած ոչխարների հոտերը և ճարպը հալեցնում։

«Նատ ժամանակ չէ, որ մի ֆրանսիական ընկերություն ոտք է հաստատել Նախիջևանի մոտ, որի խորհուրդն է զանազան մսեղեն պաշարներ պատրաստել Եվրոպա ուղարկելու համար» (Մ. Նալբանդյան, «Երկեր», հատոր 1, Ռոստով-Դոն, 1903, էջ 195—196)։

Նոր-Նախիջևանի հյուսիսային կողմում, քաղաքից երկու կիլոմետր հեռավորության վրա, Անանուն ձորի (Безымянная балка) հարավային մասում, քաղաքային սպանդանոցի մոտերքը, կողք-կողքի շարված էին նախիջևանցի վաճառականների սալղանները, որոնց թիվը 18 էր[1]։ Դրանք հիմա չկան։ Այնտեղ այժմ կանգնած է խոշոր արդյունաբերության հսկան՝ «Սելմաշ» գործարանը իր բարեկեցիկ բանավանով և բազմաթիվ կուլտուրական հաստատություններով։

Սալղաններում մորթված ոչխարների հոտերը կոչվում էին քեսեքներ, իսկ այդ գործով զբաղվողներին անվանում էին քեսեքչիներ. նրանք մորթում էին բյուրավոր ոչխարներ և ճարպը (сало) արտահանում։

Սալղաններ հիմնողները քեսեքչիներն էին։ Նրանք մորթում էին իրենց քեսեքները և իրենցից հետո շենքը վարձով էին տալիս սալղան չունեցող քեսեքչիներին։

Քեսեքչիների գործը առևտրական անասնապահության, մասնավորապես խաշնարածության ամենաարդյունավոր ճյուղերից մեկն էր։

Դոնի ընդարձակ տափաստանը, Վոլգայի ստորին ջրաբաշխից սկսած մինչև Դնեպրի ափերը, ամբողջ Դոնբասը և Հյուսիսային Կովկասը իրենց պարարտ հողերով, սննդառատ և հյութալից արոտներով, առատ խոտերով և քաղցրահամ ջրերով նպաստում էին առևտրական անասնապահությանը, մանավանդ նրբագեղմ ոչխարաբուծությանը։ Հայ առևտրականները լայնորեն օգտվեցին այդ հնարավորություններից և Ղրիմի չոր, անջուր գաշտերից եկած հայ անասնապահները ուժեղ զարկ տվին առևտրի այդ ճյուղի զարգացմանը։ Սկզբում սալղանների գործով զբաղվում էին միմիայն Նոր-Նախիջևանում։ 1822 թ. գեներալ Երմոլովի առաջարկով Նոր-Նախիջևանցի վաճառականների մի ստվար խումբ (50 ընտանիք) լեռնցիների հետ առևտուրը զարգացնելու նպատակով տեղափոխվեց նոր հիմնված Ստավրոպոլ քաղաքը։ Այդ խմբի անդամներից մի քանիսը սալղաններ հիմնեցին և այնտեղ։ Այդ սալղանները աշխատում էին մեծ հաջողությամբ և նրանց տերերը շուտով դիզեցին խոշոր հարստություն։

1910 թ. նախիջևանցի վաճառական Եղիա Ռույանը իր չորս սալղաններից մեկը տեղափոխեց Հանքային ջրերի (Минеральные воды) մոտ գտնված ընդարձակ կալվածքը, որտեղ նա կենտրոնացրել էր իր ոչխարների մեծաքանակ հոտը։ Նույն ժամանակները խոշոր ոչխարաբույծ կազակ Շապովալովը, որ ուներ 9 խոշոր կալվածքներ, հայերի օրինակով Նովոչերկասկ քաղաքում հիմնեց իր սեփական սալղանը, որտեղ մորթում էր իր կալվածքներում մեծացրած

---

[1] Այդ սալղանների շենքերը պատկանում էին՝

1. Ալախանյան Գեորգին	— 1 հատ	9 Կոտլյարով Գրիգորին	— 1 »
2. Ռույան Եղիային	— 4 »	10. Պոպով Գրիգորին	— 1 »
3. Ոտարաշյան Մարկոսին	— 1 »	11. Տրապիզոնցյան Ղազարին	— 1 »
4. Պոպով Քերովբեին	— 1 »	12. Սերերրյակով Մանուկին	— 1 »
5. Պոպով Մանուկին	— 1 »	13. Մելիոզով Միքայելին	— 1 »
6. Պոպով Գաբրիելին	— 1 »	14. Օրեռով Ակոփին	— 1 »
7. Պոպով Գեորգին	— 1 »	15. Սարիև Գրիգորին	— 1 »
8. Կրասիլնիկյան Գեորգին	— 1 »		

ու ոիրաորած ոչխարները։ Ինչպես սրան, սալդաների կենտրոնը մնում էր Նոր-Նախիջևանում և ամեն տեղերից այնտեղ էին դալիս սալդաների պատրաստած ապրանքները դնելու։

Մեծ է եղել նրանց դերը տեղական հայ ժողովրդի ամենօրյա կյանքում, մեծ է եղել նրանց դերը առևտրի մեջ, ամբողջ հարավային Ռուսաստանում, Դոնի և Հյուսիսային Կովկասի ժողովուրդների տնտեսական կյանքում։

Հոդվածիս համեստ նպատակն է բանալ ընթերցողի առաջ քեսեքչիների գործունեության պատկերը, ցույց տալ սալդաների ծագումը, նրանց խաղացած դերը իրենց գոյության ամբողջ ընթացքում Նոր-Նախիջևան քաղաքի, շրջակա գյուղերի և ամբողջ երկրի տնտեսության մեջ։

Հոդվածը կազմված է մեր անձամբ տեսած, ծերերից լսած և պատմական գրականության մեջ հայտնի փաստերի հիման վրա։

• •
•

Սալդաների գործը հայերը Նոր-Նախիջևան բերեցին Ղրիմից։ Համառոտակի ծանոթանանք այդ գործի ղրիմյան շրջանին։

Հայերը Ղրիմում միշտ ապրել են խաշնարած ժողովուրդների մեջ։ Հայերի մեծ մասը առևտրականներ և արհեստավորներ էին։ Նրանք ապրում էին ծովափնյա քաղաքներում։ Փոքրաթիվ հայ գյուղացիք ապրում էին հարավային Ղրիմի լեռնային մասում։ Երբ է կատարվել հայերի մուտքը Ղրիմ՝ հավաստի չգիտենք։ Գիտենք հաստատ, որ խոշոր զանգվածային գաղթեր Հայաստանից դեպի Ղրիմ տեղի են ունեցել X և XI դարերում։ 1204 թ. Սև ծովի ճանապարհները բացվեցին վենետիկցիների առաջ։ Նրանք իրենց առևտրական գաղութների կենտրոն դարձրին Սուտակը, ուր շատ մեծ էր հայերի դերը[2]։

1261 թ. բյուզանդական կառավարության համաձայնությամբ Ղրիմի հարավային ծովափնյա մասում հաստատվեցին ջենովացիք։ Նրանք Սև ծովի ափերին հիմնեցին 39 առևտրական գաղութներ ու ֆակտորիաներ, որոնց կառավարչական և առևտրական կենտրոնը գտնվում էր Կաֆայում։ Այդ գաղութների և ֆակտորիաների բնակչության մեծամասնությունը կազմում էին հայերը[3]։

Ջենովացիների իշխանությունը ընդհատվեց 1475 թ., երբ թուրքերը գրավեցին Կաֆան. ամբողջ Ղրիմը և նրա խանը դարձավ Թուրքիայի վասալը։

Ասիայի խորքերից Ղրիմ եկած խաշնարած ժողովուրդները ամենքն էլ ապրում էին Ղրիմի դաշտային մասում, նրանք առևտրով և արհեստներով չէին զբաղվում։

Դեռ 671 թ. Ղրիմը անցավ խազարների իշխանության տակ։ Նրանք հիմնեցին իրենց հսկա կահանաթը, որի իշխանությունը տարածվում էր Ուրալի լեռներից մինչև Դնեպրի ափերը։ Նրանց պետությունը կործանեց (Իթիլը առնելով) Կիևի մեծ իշխան Սվյատոսլավը 965 թ.։ Ղրիմում խազարների իշխանությանը վերջ դրեց Սվյատոսլավի որդի Մստիսլավը 1015 թ.։ 1050 թ. Ղրիմին տիրեցին ղիպչաղները. նրանք իրենց ուլուսի կենտրոն ընտրեցին Հին Ղրիմ քաղաքը, որ այն ժամանակ կոչվում էր Սուրխաթ։

1223 թ. Ղրիմ մտան մոնղոլ-թաթարները, որոնք իրենց արշավանքները Ռուսաստանում վերջացնելուց հետո վերջնականապես հիմնվեցին Ղրիմում 1239 թ.։ Նրանց տիրապետությունը տևեց մինչև 1783 թ., երբ Ռուսաստանը Ղրիմը մտցրեց իր սահմանների մեջ։

Ասիայից եկած այդ երեք ազգերն էլ քոչվոր անասնապահներ էին. նրանք իրենց անասունների հետ թափառում էին երկրից-երկիր։ Ոչխարաբուծությունը նրանց տնտեսության մեջ բռնում էր առաջին տեղը։

Այդ քոչվորների նահապետական ձևերով վարած տնտեսությունը շատ անմխիթար վիճակի մեջ էր։ Իրենց անասունների տված միսը, ճարպը, բուրդը, մորթիները, կաշիները նրանք չէին կարողանում մշակել, գործնել առևտրական ապրանք և մտցնել առևտրի շրջանառության մեջ, սպառել ձեռնտու պայմաններով։ Դեռ Ղրիմի առևտրի ջենովական շրջանում քոչվոր անասնապահներին ընդառաջ գնացին հայ առևտրականները։

Հոչակավոր առևտրական կենտրոն Կաֆան զբաղված էր Արևմտյան Եվրոպայի արդյունաբերական և արևելյան երկրների արտադրած ապրանքների փոխանակությամբ։ Կաֆան այդ ապ-

---

[2] Брун, Черноморье, т. II, Одесса, 1880, էջ 139։

[3] Зевакин и Пенчко, Очерки по истории генуезских колоний на западном Кавказе в XIII—XV вв., «Исторические записки», 1938, № 3, էջ 127։

բանքների հսկա շտեմարանն էր։ Այդ տեսանկյունից են նայում եվրոպական պատմաբանները միջնադարյան Կաֆայի առևտրի վրա։

Առաջինը հայ վաճառականները ուշադրություն դարձրին Ղրիմի անասնապահների արտադրած ապրանքների վրա։ Նրանք տեսան, որ Ղրիմը ինքն էլ ունի արժեքավոր ապրանքներ, որոնք կարող են պատկառելի տեղ բռնել միջազգային առևտրում։ Եվ սկսեցին եվրոպական արդյունաբերական ապրանքների փոխանակության ճանապարհով ձեռք բերել քոչվորների արտադրած ապրանքները և մտցնել շուկայական շրջանառության մեջ։ Նրանք ձեռք էին բերում քոչվորների ձիերի երամակները, քշում Լեհաստան, Հունգարիա և այլ տեղեր, վաճառում այնտեղ մեծ վաստակով։ Սկսեցին գնել քոչվորների պարարտ եզները, գիրացրած ոչխարների հոտերը, միսը աղալ, ճարպը հալեցնել և արտահանել Կ. Պոլիս ու Եվրոպա։

Ղրիմի ոչխարների դմակը, կոնակի ճարպը (խրոթիշ) և համեղ միսը Կ. Պոլսում և Իտալիայում ունեցել են մեծ հաջողություն։ Շատ հեշտությամբ և խոշոր վաստակներով արտասահմանում վաճառվել են ոչխարների բուրգը, մորթին, եզների հաստ կաշիները։

Ականավոր գիտնական Բրատիանուի հայտնաբերած XIII դարի նոտարական ակտերից տեսնում ենք, որ այդ ապրանքները դեռ այն ժամանակ, հայ վաճառականների մասնակցությամբ, մեծ դեր են խաղացել միջազգային առևտրի մեջ[4]։

Բարձր որակի ճարպ, համեղ միս, արժեքավոր բուրգ և մորթիներ կարող են տալ ազնվացրած ցեղի, մեծ խնամքով պահպանված պարարտ ոչխարները։ Քոչվոր խաշնարածները, զրկված ամեն հարմարություններից, պրիմիտիվ պայմաններում, անձրևների և բուքի տակ, չէին կարող ազնվացնել ոչխարների ցեղը և պարարտացնել անհրաժեշտ չափով։

Հայ մսագործ վաճառականները սկսեցին իրենք զբաղվել գիրացման գործով։ Նրանք գնում էին թաթար և նոգայ խաշնարածներից բեղմնավորման համար արդեն օգտագործված, ամուլ թողած մայր ոչխարներ (անաբաշներ) և կամ ամորձատված 6—7 տարեկան արուներ (վալբխներ)։ Այդ ոչխարների հոտերը փորձված հովիվների խնամքի տակ ամբողջ գարնանը, ամռանը և աշնանը արածելով ամենաբնտիր արոտավայրերում, լավ գիրանում էին և հավաքում առատ ճարպ։

Գիրացած ոչխարները ամեն աշնան մորթում էին։ Այդ նպատակի համար հայ վաճառականները սկսեցին շինել առանձին շենքեր, որտեղ մորթած ոչխարների ճարպը հալեցնում էին գործարանական խոշոր կաթսաներում, հեղուկ գրությամբ լցնում մաքուր տակառների մեջ, միսը աղում, պատրաստում ապուխտ, էրեշկիկ, բալիքներ, իսկ լեզուները չորացնում։ Այդ գործարաններում մշակված մթերքները մեծ հաջողություն ունեին արտասահմանի շուկաներում։

Մորթիները չորացնելու, բուրդը խուզելու, պատրաստի ապրանքները պահելու համար շինում էին շտեմարաններ և այլ օժանդակ շենքեր։ Այդ բոլոր շենքերը, ի մի առած, կոչվում էին սալղաններ։ Ըստ տեղեկությունների առաջին սալղանները բացվել են Կաֆայում, հետո Ղարասուբազարում, Հին Ղրիմում և Կոզլովում։

Առևտրական կապիտալի հաջողությունը հնարավորություն տվեց հայ և հույն վաճառականներին իրենց կապիտալը մտցնել անմիջապես ոչխարարուծության մեջ, տալ նրան արդյունաբերական ձև, արտադրել ոչխարներ, ստեղծել իրենց արտադրող մայր ոչխարների հոտերը և իրենց մեծացրած ոչխարներից ջոկել գիրացման հոտեր։ Այդ, իհարկե, չէր խանգարում գնել և թաթարների հոտերը։ Բացի բերներերան մեզ հասած տեղեկություններից, անմիջապես այս հարցին նվիրված պատմական աղբյուրներ մենք չունենք, կարող ենք դատել միմիայն կողմնակի աղբյուրների հիման վրա։

Մեզ հայտնի է, որ Ղրիմում խիստ զարգացած էին մաշկագործությունը, ոչխարների մորթիների մշակումը։ Ոչխարարուծության և սալղանների գործի զարգացումը մեծ զարկ տվեց կաշեգործությանը։ Բազմաթիվ հայ մաշկագործներ մշակում էին սալղանների շուկա ձգած մորթիները, պատրաստում Ղրիմի, Չերքեզիայի և Հյուսիսային Կովկասի համար գույնզգույն մեշիններ, սաֆյաններ և այլ բազմաթիվ կաշվեղեն իրեր։

XVIII դարի երկրորդ կեսում, 25 տարի Ղրիմի խանության մեջ ֆրանսիական դեսպանի պաշտոն է վարել հայտնի տնտեսագետ Պեյսոնելը, որը իր կյանքի ամբողջ ընթացքում ուսումնասիրել է Սև ծովի ավազանի առևտրի պատմությունը և դրել երկու ստվար հատորներից բաղկացած մի արժեքավոր աշխատություն[5]։

---

[4] Bratianu, Actes de notaire genois de Pera et de Caffa, Paris, 1927.

[5] Peisonele, Traité sur le commerce de la mer Noire, Paris, 1787.

Պեյսոնելի ստացած պաշտոնական տվյալների համաձայն մաշկագործ արհեստավորները, Ղրիմի ժողովրդի կարիքները բավարարելուց հետո, միմիայն Չերքեզիա արտահանել են՝

1. Դեզին մեշին (mechin)	20000	թուրա
2. Կարմիր մեշին	10000	»
3. Սպիտակ մեշին	20000	»
4. Սև մեշին	5000	» [6]

Այս քանակից ոչ պակաս մեշին արտահանել են Ղրիմից նողայների երկիրը։ Բացի այս արտահանվել են միշտ մեծ քանակով սաֆյան և մորթիներից պատրաստած շատ ուրիշ ապրանքներ։ Մաշկագործների պատրաստած այդ ապրանքները տանում էին նաև Դաղստան և շատ այլ արևելյան երկրներ։

Մորթիներից պատրաստված ապրանքների պատկառելի քանակը ցույց է տալիս, որ ոչխարաբուծությունը և սալդաների գործը Ղրիմում ունեցել են մեծ ծավալ և նշանակություն։ Պատմաբանների ասելով, մանավանդ հայտնի ղրիմագետ, Ղրիմի բազմահատոր պատմության հեղինակ Վ. Կոնդորակիի վկայությամբ, երկրի ներքին և արտաքին ամբողջ առևտուրը XVIII դարում գտնվել է հայերի ձեռքում[8]։ Նույն դրության մեջ էր և արհեստների գործը։ Ղրիմի հայ մաշկագործներն (տապախները) էին կաշեգործության մեջ գլխավոր դեր խաղացողները։

Սալդաների գործը մեծ զարկ տվեց օճառի և ճրագների արտադրությանը։

Մի խոսքով կարելի է հաստատ ասել, որ հայ և հույն վաճառականները շատ նկատելի դեր էին խաղում Ղրիմի ինչպես առևտրական, այնպես էլ արդյունաբերական ոչխարաբուծության մեջ։

* *
*

Ղրիմի խանի իշխանությունը, չնայած նրա ասիական ծագումին, ինքնակալ իշխանություն չէր։ Այն սահմանափակված էր Դիվանի իշխանությամբ։ Խանի արքունիքի բյուջեն շատ սահմանափակ շրջանակների մեջ առնված մի առանձին բյուջե էր։ Նրա գլխավոր աղբյուրը կազմում էին քրիստոնյա վաճառականների և արհեստավորների վճարած տուրքերը, որոնց նշանավոր մասը ստացվում էր սալդաներից։ Եվ որովհետև այդ անբավական էր, խաները կազմակերպում էին խոշոր հրոսակախմբեր և կատարում ավերիչ արշավանքներ հարավային Ռուսաստանի վրա։ Այդպիսի արշավանքներ կազմակերպում էր և թուրքական կառավարությունը Ազով բերդի վրայով, նոգայների օգնությամբ։

Խանի և սուլթանի հրոսակախմբերը կողոպտում ու թալանում էին քաղաքներն ու գյուղերը, խլում ժողովրդից նրա արյուն-քրտինքով աշխատած ապրանքները, քշում նրանց անասունները, և ամենազարհուրելին այն էր, որ գերի էին տանում մարդկանց, տղաներին ու աղջիկներին, արտահանում արևելյան շուկաները և ծախում ստրկության։

Այդպիսի դրության հետևանքով հարավային Ռուսաստանի բերրի և հացառատ հողերը մինչև XVIII դարի վերջին քառորդը մնում էին անմարդաբնակ և անմշակ, իսկ ռուս մուժիկը ստիպված էր քրտինք թափել հյուսիսի անպտուղ, կրախառն հողերի վրա։

Այդ բանի վրա ուշադրություն դարձրեց Պետրոս I-ը, բայց Սև ծով դուրս գալու նրա ձգտումները իրագործեց Եկատերինա II-ի կառավարությունը։

Պետրոս I-ից հետո ռուսաց բանակը երկու անգամ գրավեց ամբողջ Ղրիմը, սակայն չմիացրեց իր սահմաններին, խուսափելով միջազգային բարդացումներից։

1774 թ. Թուրքիայի խոշոր պարտությունից հետո, Քուչուկ-Կայնարջիի դաշնագրության համաձայն, Ռուսաստանը ստացավ Կերչ և Ենիկալե բերդերը Ղրիմում, Կինբուրն և Ազով բերդերը։ Ռուսաց նավատորմիղի առաջ բացվեցին Կերչի նեղուցը, ամբողջ Սև ծովը, Դարդանելն ու Բոսֆորը։ Այս դաշնագրությունը մի մեծ այգ էր հարավային Ռուսաստանի զարգացման համար։ Հարավային Ռուսաստանը առհավետ ազատվեց թաթարների և թուրքերի հարձակումներից։

Սկսվեց հարավային Ռուսաստանի բուռն շինարարությունը։ Ղրիմի խանը ընդմիշտ զրկվեց Ռուսաստանից բերված ավարներից ստացված իր եկամտի խոշոր աղբյուրից։ Խանի եկամտի միակ աղբյուրը մնաց քրիստոնյաների վճարած տուրքը։ Ռուսաց կառավարությունը որոշեց

---

6 Նույն տեղում, հատ. I, էջ 127—128։

7 Նույն տեղում, էջ 325—335։

8 В. Кондораки, Универсальное описание Крыма, СПб., 1875, էջ 113 և հտ.։

զրկել խանին նաև եկամտի այդ միակ աղբյուրից, դուրս բերել Ղրիմից բոլոր քրիստոնյաներին։ Ղրիմի քրիստոնյաներն էին հայերն ու հույները և ստրկությունից ազատված մի քանի տասնյակ վրացիք։

Ծրագրի հեղինակն էր գեներալ Ռումյանցև-Զադունայսկին։ Նրա զեկուցման հիման վրա Եկատերինա II-ը 1778 թ. մարտի 8-ին մի առանձին ռեսկրիպտով հրամայեց քրիստոնյաներին Ղրիմից հանել և բնակեցնել հարավային Ռուսաստանի բերրի հողերի վրա։

Այդ բռնագաղթի գործը սկզբում հանձնարարեցին գեներալ Պրոզորովսկուն։ Բայց նա դա համարեց անարդար գործ և հիվանդության պատրվակով ստացավ երկամյա արձակուրդ ու հեռացավ։ Նրա տեղը նշանակվեց Սուվորովը, որը դուրս բերեց Ղրիմից բոլոր քրիստոնյաներին։ Լաց ու կոծով նրանք թողեցին իրենց հարյուրավոր տարիների ընթացքում շինված գյուղերն ու քաղաքները, պարտեզներն ու այգիները։ Քրիստոնյաներին խոստացել էին նոր կառուցվող Եկատերինոսլավ (այժմ Դնեպրոպետրովսկ) քաղաքը իր ամբողջ շրջանով։ Դրա համար Սուվորովը գաղթականներին բերեց Դնեպր գետի Օրյոլ և Սամար ճյուղերի միջև ընկած դաշտավայրը, կանգ առավ, որպեսզի այստեղից սկսեն հողերի բաժանումը։ Սակայն շուտով պարզվեց, որ գաղթականներին խոստացված բոլոր հողերը գրավել են բարձրաստիճան զինվորականները. գաղթականներին առաջարկեցին որոնել և գտնել ուրիշ հարմար հող։

Սուվորովը, իրեն հանձնված գործը կատարած համարելով, հեռացավ։ Մի տարի անց հույները ստացան Մարիուպոլ քաղաքը իր շուրջը գտնվող 75000 դեսյատին ընտիր հողով, իսկ հայերը 1779 թ. նոյեմբերի 14-ին ստացան շուրջ 90 հազար դեսյատին հող Դոն գետի աջ ափին Դմիտրի Ռոստովսկու բերդի արևելյան մասում։

Հայ գաղթականները շինեցին Նախիջևան քաղաքը և նրա շրջակայքում գտնվող 5 գյուղերը։

* *
*

Հայերը, ինչպես և հույները, Ղրիմից դուրս են բերել մեծ քանակությամբ ոչխար, բայց ոչ ոք այդ թիվը հաստատ չդիտե։ Մենք լսել ենք ծերունիներից, որ անցյալ դարի վերջերին Ասխովին Պետրոսի և Օտաբաշին Մարկոսի Ղրիմից բերած ոչխարների թիվը այնքան մեծ է եղել, որ իրենք էլ ստույգ չեն իմացել այն։ Խիստ շատ ոչխարներ են իրենց հետ բերել և չուլթրցի Թոխթամիշներն ու Խրտոները։

Ճոռմին պապին, որ հարյուր տարվա հովիվ էր և մեռավ մեր դարի սկզբին, հաստատում էր, որ Ղրիմից հայերը բերել են երկու հարյուր հազար ոչխար, իսկ մի այլ ծերունի՝ Ղազար պապին (Ճինիբալյան) հաստատում էր, որ ոչխարաբույծ Տրապիզոնցյանները և Օբերյանները ունեցել են հարյուր հազար գլուխ։ Ոչխարների հսկայական քանակի մասին են վկայում նաև սալղանների թվերը։ Ղրիմից հայերը բերել են 7 սալղան, որոնցից 5-ը սկսել են աշխատել հենց քաղաքի գոյության առաջին օրվանից։ Սալղանները իրենց գոյությունը պահել են շուրջ 140 տարի։ Այդ ժամանակաընթացքում նրանք, մանավանդ սարքավորումը, անշուշտ ենթարկվել են փոփոխությունների։ Մենք լսել ենք չորս սալղանների տեր, մեծ ոչխարաբույծ Եղիա Բայանից, որ Ղրիմից բերած սալղանները բոլորն էլ ունեցել են պղնձե կաթսաներ, որոնց մեջ ճարպը հալեցրել են և լցրել ոչ միայն փայտե տակառների, այլև ոչխարների փորերի մեջ։ Նրա աներն ունեցել է այդպես կահավորված սալղան, որը հետո վերանորոգվել է և պատկանել իրեն։ Այդ մասին մենք լսել ենք և այլ քեսեքչիներից՝ Գաբրիել Պոպովից, Դանիել Խազիզովից և ուրիշներից։

Ինչպես արդյունաբերական, այնպես էլ առևտրական ոչխարաբուծությունը Նոր-Նախիջևանի հիմնավորման առաջին օրերից նրա տնտեսության մեջ բռնեց մեծ և պատկառելի տեղ։ Ոչխարների գիրացման (քեսեքների) և սալղանների գործը հարավային Ռուսաստանի, Դոնի և Հյուսիսային Կովկասի բարենպաստ պայմաններում արագորեն զարգացավ և շատ լայնացրեց իր գործունեության շրջանակները։

* *
*

Մի քանի անգամ հողերի սահմանները փոփոխելուց հետո հայ հասարակությունը ստացավ շուրջ 92000 դեսյատին հողամաս։ Ըստ հրովարտակի՝ 12 հազար դեսյատին ստանում էր քաղաքը, 30-ական դեսյատին ամեն մի շնչի համար ստանում էին գյուղացիք։ Հող ստացող գյու-

զացիների թիվը 1300 հոգուց պակաս էր, այնպես որ քաղաքի և գյուղացիների հասանելիք հողամասերը կտրելուց հետո աղատ մնում էր մոտ 40 հազար դեսյատին հող, որ, որպես ամբողջ հայ հասարակության պատկանող ֆոնդ, մնում էր հայոց Մագիստրոսի տրամագրության տակ։ Այդ հողերը վարձակալում էին անասնապահները՝ հոտերն արածեցնելու և խոտը հնձելու համար։

Հայերի հողամասը խոփ չտեսած կուսական հող էր։ Հարավային կողմից հայկական հողի սահմանն էր Դոն գետը, հյուսիսից՝ Սամբիկ գետի ձորը։

Սամբիկի ձորից դեպի հյուսիս գտնվող դաշտավայրը, որը հասնում էր մինչև Միուս գետը, այսինքն հույն գաղթականության հողամասի սահմանները և որը հայտնի էր Սամբիկի հյուսիսային տափաստան անունով, բոլորովին ազատ էր։ Նրա մեծությունը հասնում էր հարյուր հազար դեսյատինի։ Հովսեփ Արղությանի խնդրանքով իշխան Գրիգորի Պոտյոմկինը խոստացել էր այն հատկացնել չերքեզահայերին։ Այդ որոշումը հաստատել էր և Ալեքսանդր I կայսրը. մինչև իր մահը նա պահեց այդ հողը նրանց համար, բայց զանազան, իրենցից անկախ պատճառներով չերքեզահայերը չկարողացան գալ։

Հյուսիսային տափաստանը, որ խիստ բերրի և խոտառատ դաշտ էր, միշտ կապալով էին վերցնում հայ անասնապահները։ Անասնապահությունը զարդացնելու նպատակով պետությունը նշանակում էր շնչին կապալավարձ։ Միուս գետի աջ ափը, մինչև Ազովի ծովը, պատկանում էր հույն գաղթականներին։ Հույն գաղթականների թիվը հայերի հետ համեմատ այնքան էլ մեծ չէր, ըստ պաշտոնական տեղեկությունների այն հասնում էր 19 հազար հոգու[9], իսկ ակադեմիկոս Բուտկովի ասելով, հայերի թիվը շուրջ 20 հազար էր[10], բայց հույները ստացան 775 հազար դեսյատին հող, որ նրանք անկարող էին մշակել կամ անասնապահության համար օգտագործել[11]։ Հույների ավելորդ հողերից, նրանց արոտներից և խոտերից դարձյալ օգտվում էին հայ անասնապահները, դլխավորապես ոչխարաբուծությամբ զբաղվողները։ Հունաց հողերի վրա մեծ տընտեսություն են ունեցել Ղարաչայանները, որոնք զբաղվել են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ։

Հույները ևս զբաղվում էին ոչխարաբուծությամբ, սակայն իրենց սալդանները չունեին, քեսեքների համար մեծացրած ոչխարները ծախում էին նախիջևանցիներին։ Հայերից և հույներից առաջ XVIII դարի կեսերին, ռուսաց կառավարության հրավերով Դնեպրի Զախափնյա Ուկրաինա եկան թուրքերի բարբարոսությունից զզված բազմաթիվ սերբեր, բուլղարներ, խորվաթներ, մակեդոնացիներ, հունդարացիներ և այլ ազգեր։ Նրանք նախօրոք ստացել էին խոշոր արտոնություններ, որի հիման վրա հիմնեցին իրենց ինքնավար Սլավյանո-Սերբիա գաղութը, Բախմուտ (այժմ Արտեմնսկ) կենտրոնով, հիմնեցին Սլավյանո-Սերբսկ քաղաքը, բազմաթիվ գյուղեր և Սլավյանսկ բերդաքաղաքը։ 1753 թ. իրենց զորքերով այստեղ եկան սերբական գնդապետ Ի. Շևիչը և Ռ. Պոբոատովիչը։ Նրանց հանձնվեց այդ երկրի պաշտպանությունը Ղրիմի թաթարների և թուրքերի արշավանքներից։ Այդ գաղթականները ստացան շատ բերրի և խոշոր հողամասեր։ Սրանք ևս խաշնարած ժողովուրդներ էին։ Նրանց մեծացրած անասունների, դլխավորապես ոչխարների հոտերը ևս մեծ մասամբ գնում էին նախիջևանցի քեսեքչիները։ Այդ գնած ոչխարները նույն Սլավյանո-Սերբիայի արոտատեղիներում պահում էին ամբողջ ամառը, գիրացնում և միմիայն աշնանը քշում Նախիջևանի սալդանները՝ մորթելու։ Սլավոն ազգերը նախիջևանցի քեսեքչիներին տալիս էին մեծ քանակով քեսեքի ոչխարներ։

1783 թ. Ղրիմը միացվեց Ռուսաստանին։ Հայ քեսեքչիների առաջ բացվեցին Ղրիմի դռները։ Դոնի ամբողջ տափաստանը, Զախափնյա Ուկրաինան, Դոնբասը և Ղրիմը իրենց ոչխարներով և հարուստ արոտատեղիներով դարձան հայ քեսեքչիների գործունեության լայն ասպարեզը։

• •
•

Հայերին և հույներին Ղրիմից հանելուց հետո Սուվորովը դնաց ամրացնելու իր հիմնած Ազով—Մոզդոկ ռազմական դիծը։ Նա այդ գծի վրա ստեղծեց ինը բերդաքաղաք և բազմաթիվ ամրոցներ։ Կուրան գետը Ռուսաստանի և Թուրքիայի միջև սահմանագիծ էր։ Աջ ափը պատկա-

9 Н. Дубровин, Присоединение Крыма к России, т. II, էջ 711։

10 Бутков, Материалы для новой истории Кавказа, с 1772 по 1803 г., ч. II, էջ 47։

11 Томашевский, Переселение православных христиан Крыма в Мариупольский уезд, М., 1892, էջ 23։

նում էր Թուրքիային, իսկ ձախը՝ Ռուսաստանին։ Հյուսիսային Կովկասի ժողովուրդները ևս, ինչպես կաբարդացիք, բալկարները, կումիկները, նողայները և ուրիշներ, խաշնարածներ էին, լեռներում աճեցնում էին սև դմակավոր ոչխարներ։ Այս անասնապահները կապված չէին ընդհանուր ռուսական շուկայի հետ, նրանց տնտեսությունը գտնվում էր շատ ցածր մակարդակի վրա։

Աղով—Մոզդոկ ռազմական գծի վրա պետությունը շինեց Գեորգիևսկ, Ստավրոպոլ և Եկատերինգրադ քաղաքները։ Կովկասի քաղաքացիական իշխանության գլուխ կանգնած իշխան Պավել Պոտյոմկինը լեռնցիների հետ առևտուրը զարգացնելու նպատակով Նոր-Նախիջևանից հրավիրում է մի մեծ խումբ հայ վաճառականների, որոնք 1783 թ. հիմք դրին հայոց եկեղեցու ուսումնարանին, հայոց առևտրասրահին և քարվանսարային (гостиный двор)[12]։

Այս հոդվածի նպատակից դուրս է տալ Հյուսիսային Կովկասի առևտրի պատմությունը և նկարագրել հայերի կատարած դերը այդ ասպարեզում։ Բայց անկարելի է խոսել քեսեքչիների մասին, որոնք նմանապես վաճառականներ են, առանց մատնանիշ անելու ամենօրյա ընդհանուր առևտուրը։

Գեորգիևսկի առևտրական նշանակությունը շատ շուտով հայ վաճառականները բարձրացրին այնչափ, որ նրա տոնավաճառները ստացան համաշխարհային հռչակ։ Հայ առևտրականները կապ հաստատեցին վաղուց ի վեր Չերքեզիայում ապրող հայ վաճառականների հետ և ամբողջ Չերքեզիայի լեռներում արտադրված անասնապահական ապրանքները լցվեցին Գեորգիևսկի շուկան։ 1817 թ. Գեորգիևսկում եղած Մինաս Բժշկյանը այնտեղ տեսել է 80 կրպակ[13], որոնք պատկանել են հայերին։ Լեռներից քշվում էին բազմաթիվ ոչխարների հոտեր, որոնք գնում էին Նախիջևանի քեսեքչիները։ Գեորգիևսկի տոնավաճառը խիստ մեծ դեր էր խաղում Ռուսաստանի տնտեսության մեջ մինչև 1872 թ., երբ երկաթուղին կապեց Կովկասը Ռուսաստանի հետ և տոնավաճառի նշանակությունը նվազեց։ Նախիջևանի սալդաների գործում մեծ դեր է կատարել Ստավրոպոլի նահանգի ոչխարաբուծությունը։

1808—1809 թթ., կառավարության առաջարկությամբ, Ստավրոպոլ եկան Նախիջևանցի 50 ընտանիք։ Նրանք շատ մեծ դեր խաղացին առևտրի զարգացման մեջ[14]։ 1826 թ. նույն կառավարության հրավերով, գեներալ Երմոլովի առաջարկով, Ստավրոպոլ եկան ևս 30 ընտանիք հայեր[15]։ Այդ հայ վաճառականները, սպառելով ռուսական ու եվրոպական արդյունաբերական ապրանքները լեռնցիների մեջ, կամա թե ակամա ստիպված էին գործ ունենալ լեռնցիների գլխավոր ապրանքի՝ անասունների հետ։ Արդյունաբերական ապրանքների հետ փոխանակելով և կամ ուղղակի գնելով, նրանք ձեռք էին բերում մեծ քանակով խոշոր և մանր եղջերավոր անասուններ։ Վաճառականներից ոմանք իրենք ևս ունեին սալդաներ։ Ձեռք բերված ոչխարները նրանք կամ ծախում էին նախիջևանցի քեսեքչիներին և կամ իրենք մորթում սալդաներում։ Ոչխարը կովկասյան առևտրի մեջ բռնում էր շատ մեծ տեղ։ Կովկասյան կռիվները վերջանալուց հետո շատ ռուս և հայ վաճառականներ ձեռք բերեցին խոշոր հողամասեր անասնապահության համար։ Դրանցից էին՝ բժիշկ Հովհաննես Ֆերբերյանը, Աստվածատուրյանները, Բիլիկյանները, Փախալյանները, գեներալ Նազարովը, Թորոսյանները, Բողոսուկյանները և մի քանի տասնյակ այլ նախիջևանցի վաճառականներ։

Թորոսյանները, Պոպովը, Սարգիսովը, Գասպարյանը և շատ ուրիշներ ունեին խոշոր հոտեր՝ մի քանի տասնյակ հազար մայր ոչխարներով։ Մեզ անձամբ հայտնի է, որ Եղիա Բայանը Հանքային ջրերի (Минеральные воды) կալվածքում ուներ 12000 մայր ոչխար, որոնք տալիս էին այդքան էլ դառներ։ Բացի դրանից, նա ամեն տարի գիրացման համար պահում էր 45—50 քեսեք ոչխար։ Այդչափ էր և Օղարաշյանի, Կրասիլնիկյանի և այլոց ոչխարաբուծությունը։ Մեծ կապիտալ մտցրին ոչխարաբուծության մեջ ռուս անասնապահները. Նեստերենկոները, Մազայևները և շատ ուրիշներ ունեին մի քանի տասնյակ հազար մայր ոչխարներ, կային ոչխարաբուծներ, որոնց ոչխարների թիվը անցնում էր հարյուր հազար գլխից։

Անցյալ դարի սկզբին ոչխարաբուծները մեծ նշանակություն էին տալիս ոչխարի ճարպին։ ու մսին, սակայն շատ շուտով ճարպի կողքին զուգահեռաբար առաջնակարգ նշանակություն ստացավ ոչխարի նուրբ բուրդը։

---

[12] Шабловский, Георгиевская старина, СПб, 1914, էջ 12։

[13] Մ. Բժշկյան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 408։

[14] «Кавказский календарь за 1853 г.», էջ 473։

[15] Նույն տեղում, էջ 477։

Անգլիան, Ֆրանսիան և ամբողջ արևմտյան Եվրոպան նուրբ բրդի մեծ պահանջ էին զգում։ Միայն իսպանական ցեղի մերինոս ոչխարների բրդից կարելի էր պատրաստել թանկարժեք տեսակի ընտիր մահուդներ։ Այդ առիթ տվեց շատ նախիջևանցի առևտրականների՝ երես դարձնել սև չոնդուխ ոչխարներից, որոնց բուրդը քիչ էր ու կոշտ և զբաղվել միմիայն մերինոս ցեղի ոչխարաբուծությամբ։ Բազմաթիվ կալվածատերեր, շատ հայ ոչխարաբուծներ ստիպված եղան ձեռք բերել մերինոսի հոտեր։ Հայ վաճառականներից շատերը Դոնբասում և Հյուսիսային Կովկասում ոչխարաբուծության համար դնեցին խոշոր հողամասեր։ Նրբագեղմ ոչխարների բուծումը զարգացնելու պատրվակով դեռ XVIII դարի վերջերին Կարապետ Ոսկանյանը և Հովհաննես Աբրահամյանը հայ հասարակությանը տրված հողերից հափշտակել էին խոշոր կալվածքներ։ 1811 թ. Նախիջևանի առևտրական անասնապահությամբ զբաղվող 25 վաճառականներ Տագանրոգի քաղաքապետ Օտտո-Ֆրանկի թույլտվությամբ ստացան հայ հասարակությանը պատկանած հողերից 25 նոր կալվածքներ՝ 200—300 դեսյատին տարածությամբ։

Այս «օրինական» հափշտակումից հետո ոչխարատեր վաճառականները ինքնագլուխ կերպով սկսեցին հափշտակել հայ հասարակությանը տրված հողերը և այդտեղ ստեղծել ագարակներ։ Բանը հասավ այն աստիճանի, որ համբերատար գյուղացիք ստիպված եղան ինքնագլուխ հափշտակողների ագարակները այրել և նրանց էլ վռնդել դուրս։ Մինչև այսօր էլ այդ այրված ագարակների տեղերը կոչվում են «էրած խութուններ»։ Այդ աղմկոտ ժամանակից օգտվեց հայտնի հափշտակիչ, քաղաքագլուխ Խալիպյանը և տիրացավ չորս օրինակելի ագարակների։

Դոնի կազակների հեծելազորքը ուներ շատ ընդարձակ Սալի տափաստանը, որ սկսվում էր Դոնի ձախ ափերից և հասնում մինչև Վոլգա, Ռոստովից մինչև Վոլգոգրադ։ Դա շատ արժեքավոր կուսական հող էր, հայտնի իր սննդարար արոտներով և խոտերով, 782658 դեսյատին տարածությամբ[16]։ Դոնի զինվորական իշխանությունը այդ տափաստանը բաժանել էր 2000—2500 դեսյատին մեծություն ունեցող քառակուսի հողամասերի, որոնք շատ էժան գներով վարձով տրվում էին մասնավոր մարդկանց՝ ձիաբուծության համար։ Այդ հողերի վրա հիմնվեցին մոտ 150 խոշոր տնտեսություններ, որոնց մեջ կային 10—15 հազար դեսյատին հողամաս ունեցողներ։ Նրանց պարտականությունն էր ամեն տարի Դոնի հեծելազորքին տալ որոշ քանակով ձիեր։ Ձիաբուծությունը կապալառուների համար ձեռնտու չէր, գրա համար էլ նրանց թույլ էր տրվում զբաղվել նաև անասնաբուծությամբ և ոչխարաբուծությամբ։ Այդ տնտեսությունները ամեն տարի տալիս էին հարյուր հազարավոր սալդանի ոչխարներ։ Ամեն աշնան, սեպտեմբերի կեսերից սկսած, Հյուսիսային Կովկասի բոլոր վայրերից և հարավային Ռուսաստանի բոլոր ոչխարաբուծական շրջաններից պարարտ ոչխարների հոտերը կամաց-կամաց, ծանրաքայլ ճամփա էին ընկնում դեպի Նոր-Նախիջևանի սալդանները։

* * *

Ամեն ամառ, մինչև սեպտեմբերի կեսերը, բոլոր սալդանատերերը վերանորոգում էին իրենց սալդանները և պատրաստվում քեսեքներ ընդունելու։ Հոկտեմբերի մեկին (հին տոմարով) տեղի էր ունենում սալդանների բացումը, այդ օրվանից սկսվում էր մորթը։ Այդ օրը սալդանատերերը և քեսեքչիները սալդաններից մեկում, համարյա միշտ Պոպով Քերորի սալդանում, սարքում էին մեծ ճաշկերույթ։ Հրավիրում էին քաղաքագլխին, քաղաքային վարչության անդամներին, քաղաքապետին, ոստիկանապետին և այլ պաշտոնավոր անձանց։ Այդ հանդեսին միշտ հրավիրվում էր հայտնի զուռնաչի Ճ՞ոին իր նվագախմբով։ Նվագում էին միմիայն հայկական, Ղրիմից բերված երգեր։

Քաղաքագլուխը իր ձեռքով բաց էր անում սալդաններից մեկի դարպասը և ոչխարները ներս էին թափվում բակը։ Այդ իրավունք էր տալիս բոլոր սալդաններին սկսել մորթը։ Ամեն մի սալդան բռնում էր 1—1½ դեսյատին հողամաս։ Դա նրա բակն էր, որ շրջապատված էր լինում բարձր տախտակապատով։

Բակի մեջտեղում շինված էր լինում սալդանը, նրա գլխավոր շենքը, որի երկարությունը հավասար էր բակի լայնությանը։ Սալդանների գլխավոր շենքերը բոլորն էլ շինված էին քարաշար հիմքերի վրա, բարձր առաստաղով, երկու կողմից լուսավորված բարձր ու լայն պատուհաններով։ Նրա մեջտեղում, ամբողջ երկարությամբ, շարված էին լինում 10—12 խոշոր կաթսաներ, որոնց մեջ հալեցնում էին ոչխարների ճարպը։

---

16 И. П. Хлыстов. Дон в эпоху капитализма. Ростов, 1962, էջ 92։

Կաթսաների տակ, խոր գետնի մեջ, սարքում էին երկար վառարան, որ բարձրորակ քարածուխով տաքացնում էր կաթսաները և հալեցնում ճարպը։ Կաթսաների երկու կողմերում, շենքի ամբողջ երկարությամբ շարված էին լինում սեղաններ (стойки), որոնց վրա մորթում էին ոչխարները։

Ամեն մի սալղանատեր մորթի ժամանակ բանեցնում էր 32—35 բանվոր, որոնք մորթում էին, քերթում, ճարպը հալեցնում, միսը աղատում ճարպից, մշակում, մորթիները չորացնում և այլն։ Բանվորներն ապրում էին սալղանների հանրակացարաններում։ Ամեն օր, ամեն մի նոր հոտի հետ դալիս էին չորս հովիվ, որոնք նույնպես շուրջ մի շաբաթ ապրում էին հանրակացարանում։

Ոչխարների տերերի մեջ ևս հաճախ պատահում էին հեռվից եկած մարդիկ, որոնք մորթի ժամանակ գիշեր-ցերեկ ապրում էին սալղաններում, նրանց ևս հարկավոր էր մի անկյուն։ Այդ նպատակով սալղանների բակերում կառուցում էին մեծ տուն-հանրակացարան, ուր ապրում էին բանվորներն ու հովիվները՝ առանձին-առանձին սենյակներում։ Ոչխարների տերերի համար ևս այդ տան մեջ լինում էր ապրելու առանձին տեղ։ Այդ տան մեջ լինում էր մեծ խոհանոց և ընդարձակ ճաշարան։ Բացի այդ շենքերից լինում էին մեծ ամբարներ, որտեղ քեսեքչիները դարսում էին ճարպի և մսի տակառները, չորացրած մորթիները՝ մինչև ծախելը։ Բակի մի ծայրում շինում էին մի մեծ փարախ, որտեղ պահվում էր մորթի եկած ամբողջ հոտը։ Բացի այդ մեծ փարախից, սալղանի բուն շենքին կից լինում էր մի փոքր փարախ 100—120 գլուխ ոչխարների համար։ Մորթի ժամանակ շոբանները մեծ փարախից մաս-մաս ոչխարները բերում էին այդ փարախը, իսկ մորթողները մորթելու էին տանում այդտեղից։ Ամեն մի սալղանի բակում լինում էր ձողերից պատրաստված հարմարություն մի քանի հազար մորթի չորացնելու համար։ Թաց մորթիները կախում կամ փռում էին այդ ձողերի վրա, 2—3 օր չորացնում և ապա հավաքում ու դարսում պահեստում։

Ամեն մի սալղան ունենում էր մի կամ երկու ջրհոր։ Ամեն մի գլուխ ոչխարի համար սալղանատերերը ոչխարի տիրոջից ստանում էին 10—12 կոպեկ։ Բանվորների աշխատավարձը վճարում էր սալղանի տերը։ Միայն միսը՝ սննդի համար, տալիս էր քեսեքչին։ Եփելու համար վերցնում էին ճարպաղուրկ վզի միսը, որը համարվում էր ամենահամեղը։

Յուրաքանչյուր սալղան օրական մորթում էր մի հոտ ոչխար, որ բաղկացած էր լինում 1000—1300 գլխից։ Ամեն հոտին տրվում էր 2—3 կաթսա, 3 օր ժամանակով. այդ ընթացքում մորթող քեսեքչին պարտավոր էր ճարպից կաթսաները ազատել և առհասարակ դուրս գալ սալղանի գլխավոր շենքից։

* * *

Առավոտյան ժամը 5—6-ին սկսվում էր մորթը։ Հովիվները մեծ փարախից ջոկում էին 100—130 ոչխար և բերում փոքր փարախը, որ կից էր լինում սալղանի գլխավոր շենքի պատին։ Երկու-երկու բանվոր փոքր փարախից վերցնում էին մի-մի ոչխար։ Առջևի երկու ոտքերի արանքը մտցնում էին մի փոքր փայտ, որի երկու ծայրերն էլ ունենում էին կիսակոր փոսեր։ Առջևի ոտքերը ձգում էին փոսերի մեջ, փայտը բռնում էր մի բանվոր, իսկ հետևի ոտներից բռնում էր երկրորդ բանվորը։ Բանվորները ներս էին բերում ոչխարը և կոնակի վրա դնում մորթի սեղանին։ Մի ակնթարթում մորթողը խրում էր դանակը ոչխարի սիրտը։ Գլուխը չէին կտրում։ Ոչխարի մարմինը իսկույն կախում էին և հանում մորթին ու կոնակի ճարպաշապիկը։ Եթե մորթվողը դմակավոր էր, կոնաշապկի հետ հանում էին և դմակը։ Դմակը և կոնաշապիկը ձգում էին մի կաթսայի մեջ։ Այնուհետև բաց էին անում փորը և հանում փորի ճարպը և հաստ աղիքները՝ ճարպը վրան։ Մորթողը հաստ աղիքները կտրում էր կտոր-կտոր և ամեն մի կտորը բռունցքի սեղմումով մաքրում։ Փորի, հաստ աղիքների ճարպը, ոչխարի ամբողջ գլուխը (լեզուն միջից հանելուց հետո), ողնաշարը և կողոսկրները ձգում էին երկրորդ կաթսայի մեջ։ Այդ ամենը հսկա կաթսաների մեջ հալվում և հեղուկ էր դառնում։

Դմակի և կոնաշապկի հալեցրած ճարպը համարում էին առաջին որակի, սննդի համար գործածելու ճարպ (кашное сало), իսկ փորի, գլխի, աղիքների և ոսկորների վրայի հալեցրած ճարպը համարվում էր երկրորդ որակի, տեխնիկական ճարպ (техническое сало)։

Հալեցրած ճարպը հեղուկ դրության մեջ լցնում էին տակառները, փակում և տանում ամբարը։ Ճարպաղուրկ միսը բաժանում էին տեսակների։ Առանձին կտրում էին՝

1. Առջևի ոտների թիակները, 2. հետևի ոտները իրենց փափուկ մասերով, 3. ողնաշարի տակի փափուկ միսը՝ ֆիլեն, 4. ճարպազուրկ վզերը, 5. լեզուները։

Բացի սրանից առանձին հավաքում էին թոքերը և երիկամները։ Մի խոսքով ոչխարները սալղաններում դառնում էին

1. ճարպ, 2. միս, 3. մորթի՝ բուրդը վրան, 4. թոքեր և 5. երիկամունք։

Ոչխարների բարակ աղիքները տեղն ու տեղը գնում էին օտարազգի վաճառականները՝ քիմիական գործարանների համար։ Առանձին հավաքում էին և սմբակները։

* *
*

Սալղանների արտադրած ապրանքները մեծ նշանակություն ունեին ժողովրդի պարենավորման համար։ Մեզ ծանոթ շրջանում, 1897-ից մինչև 1917 թվականը, սալղանները ծախում էին.

1. ճարպազուրկ թիակների փութը՝ 50—80 կոպ.։
2. Հետևի ոտքերի փութը (փափուկ միսը վրան)՝ 1 ռ. մինչև 1 ռ. 20 կոպ.։
3. Ֆիլե միսը բալիքների համար՝ փութը 1 ռ. 50 կոպ.-ից մինչև 1 ռ. 80 կոպ.։
4. ճարպազուրկ վզի միսը՝ փութը 40 կոպ.։
5. Լեզուների հարյուրը՝ 3 ռ.։
6. Թոքերի հարյուրը՝ 1 ռ. 50 կոպ.։
7. Երիկամունքների հարյուրը՝ 1 ռ.։
8. Սմբակների հարյուրը՝ 1 ռ.։

Քաղաքի և գյուղերի ժողովուրդը գնում էր այդ մսեղեն մթերքները, գործածում ամենօրյա սննդի համար և նրանցից պատրաստում ամբողջ տարվա պաշար։

Առջևի ոտքերի թիակներից պատրաստում էին ապուխտներ։ Սկզբում այդ թիակները աղում էին, հետո լավ չամանապատում և պարանի վրա զույգ-զույգ կախած չորացնում գուրսը։ Աղը և գլխավորապես չամանը պահպանում էին միսը վնասվելուց։ Շուրջ երկու շաբաթվա ընթացքում միսը չորանում էր և դառնում համեղ ուտելիք։ Ժողովուրդը մեծ քանակով պատրաստում էր ապուխտ և գործածում ամբողջ ձմռանը և գարնանը։ Ապուխտը վաճառվում էր տեղական շուկայում կամ արտահանվում էր Ղրիմ, Օդեսա և այլ վայրեր։ Ետևի ոտքերը ծախում էին փափուկ միսը վրան։ Ետևի ոտքերի մսից պատրաստում էին էրեշկիկ կամ երշիկ։ Ոտների վրայի միսը հանում էին առանձին, առանց ոսկորների, փափուկ միսը աղում հատուկ մեքենայով, մանրացնում. մեջը լցնում չաման, սև պղպեղ և երբեմն նաև սխտոր։ Այդ մանրացրած և համեմած միսը լցնում էին հատկապես էրեշկիկի համար պատրաստված լայն աղիքների մեջ, ծայրերը կապում բարակ թելով, երկու ծայրերը միացնում և բացօթյա կախում՝ չորանալու։ Ամեն առավոտ այդ էրեշկիկները գրտնակով տափակացնում էին, ցերեկը կախում էին բակում կամ պատշգամբում, գիշերները հանում թավանը։ 15—20 օրվա ընթացքում էրեշկիկները չորանում էին և դառնում համեղ ուտելիք։

Էրեշկիկը տարածված ուտելիք էր նախիջևանցիների մոտ։ Շատերը պատրաստում էին մեծ քանակով և ծախում տեղում, տանում Ղրիմ, Օդեսա և Մոսկվա։ Էրեշկիկը ընդունված էր և տեղական ռուս ժողովրդի մեջ։

Հետևի ոտքերի մսազուրկ ոսկորները գործածվում էին զանազան տեսակի սպասներ պատրաստելու համար։

Մորթի ժամանակ առանձին հավաքում էին փափուկ միսը՝ ֆիլեն։ Ժողովուրդը գնում էր այդ ֆիլեն և նրանցից բալիք պատրաստում։ Այդ միսը լվանում էին, աղում, թաթախում չամանի մեջ և կախում չորանալու։ Նա ևս չորանում էր ապուխտների և էրեշկիկների հետ միասին։

Ամենից ավելի ընդունված ուտելիք էր ոչխարների լեզուն։ Շատ մեծ էր նրա պահանջը։ Չնայած թանկ գնին (3 կոպեկ հատը) ամեն մի նախիջևանցի ընտանիք վերցնում էր մի քանի հարյուր լեզու։ Մեծ մասը նրանք չորացնում էին։ Լեզուները մաքրում էին, լվանում, աղում և փաթաթելով չամանի մեջ, պարանի վրա զույգ-զույգ կախում էին չորացնելու։ Շատ խանութներ և առաջնակարգ հյուրանոցների սեղանատներ զբաղվում էին նրա սպառումով։ Բացի չորացնելուց, լեզուները թեթև խաշում էին և պահում մարինադի մեջ։ Շատերը չորացնում էին հազարներով և տանում ուրիշ քաղաքներ վաճառելու։

Վզի վրայի ճարպը հանելուց հետո մնում էր վզոսկրը իր վրայի փափուկ մսով։ Մասնագետների կարծիքով վզոսկրի միսը ամենահամեղ, ամենափափուկ և սննդարար միսն է։ Չնայած

դրան, մորթի ժամանակ այն ոչ ոք չէր գնում, թեպետ գինն էլ շատ էժան էր, փութը ընդամենը 40 կոպեկ։ Վգի միսը տեղացի և եկվոր վաճառականները աղում էին և արտահանում վաճառելու։ Ժողովրդի մեծ մասը ևս ամբողջ ձմեռվա համար աղում էր սալղանի միս, բայց չնայած դրան տեղական շուկայի պահանջները չէին կարող սպառել սալղանների արտադրած միսը։ Ռոստովի և Նախիջևանի մսավաճառները աշնան ամիսներին շուկաների մեջ վրաններ էին սարքում և ծախում սալղանի միս։ Սալղանները ամեն օր մորթում էին տասը հազարից ավելի ոչխար, միսը մնում էր։ Շատ քեսեքչիներ իրենք էին աղում մնացած միսը, շատերն էլ տեղն ու տեղը ծախում էին Ղրիմից եկած կարաիմ և թաթար վաճառականներին, նրանք աղում էին հարյուրավոր ու հազարավոր տակառներով, տանում Ղրիմ, Պոլիս և այլ տեղեր։ Հայ քեսեքչիներից այդ գործով լրջորեն զբաղվում էին Ղուկաս և Գևորգ Ղարագյոզյանները։ Սրանք պահում էին 4—5 քեսեք, բայց աղում էին տասնյակ հազարավոր փութ։ Գևորգ Ղարագյոզյանը ամբողջ տարին բանեցնում էր իր տակառների գործարանը, նրանց մեջ աղում սալղանի միս։ Այդ աղած միսը նրանք շատ անգամ ծախում էին տեղում՝ եկվոր կարաիմ վաճառականներին և կամ իրենք տանում Ղրիմ և Օդեսա։ Ղարագյոզյանների օրինակին հետևողներ շատ կային։

Սալղանները ծախում էին ամեն օր մի քանի հարյուր թոք և երիկամունք։ Մեծ քանակով թոքեր ու երիկամներ մնում էին չծախված։ Դրանք լցնում էին մի մեծ հորի մեջ, որտեղ ձգում էին և փորերը։ Այդ ամենի վրա աղ էին ցանում և ամբողջ ձմեռը կերակրում ոչխարապահ շներին։ Ամեն մի քեսեք գալիս էր սալղան իր երկանիվ սայլով և շներով, որոնց քանակը 5—6-ից պակաս չէր լինում։ Երբ քեսեքները մորթում էին, հեռվից եկած քեսեքչիները իրենց շներին թողնում էին պահապանների մոտ, որոնք մի ուրիշ տարեկան վարձով ամբողջ ձմեռը կերակրում էին դրանց։ Գարնանը քեսեքչիները առնում էին իրենց սայլերը շների հետ և ուղևորվում նոր քեսեք ընդունելու։

Սալղանները մեծ սպառում ունեին։ Կար նույնիսկ ժողովրդական երգ.

Կինմարդիկ. մարդիկ
Էկավ նոր սալնիկ,
Եղ ու միս իլինի,
Ապուխտ, էրեշկիկ,
Զուվաններուն վրան,
Լեզու ու բալիմ,
Ազբարին օշրան
Կախած կրշորնան։
Ցորեկը սուփան,
Դիշեր բավան,
Պոլկեկ շաման
Համան կլշորնան։

Հոկտեմբերից մինչև նոր տարի Նախիջևանում և գյուղերում խիստ ընդունված էր շամանով «խրյման» (քուֆթան), որից պատրաստում էին կոտլետներ, կարկանդակներ, սամսաներ և կոմուճ ու թելկուբաթիներ։ Քաղաքում երգում էին՝

Ուշկեկ զիզին,
Գաբոել-Միքայելին,
Պեթիր կրպաթի
Միսով կուբաթի։

* * *

Սալղանները իրենց գոյությունը պահպանեցին մոտ 140 տարի։

Այդ ընթացքում դրանք զգալի փոփոխությունների են ենթարկվել։ Սկզբի շրջանում ճարպն ու միսն էր գլխավոր դեր խաղացողը։ Հետագայում թեպետ ճարպը չկորցրեց իր դերը, բայց նրա կողքին առաջին տեղը բռնեց նուրբ բուրդը։ Սկզբում քեսեքները բաղկացած էին լինում միմիայն դմակավոր ոչխարներից, իսկ հետո եվրոպական արդյունաբերության պահանջով քեսեքները կազմվում էին միմիայն նրբագեղմ իսպանական ոչխարներից։

Քեսեքչիների համար գլխավորը ճարպն էր, ապա և բուրդը։ Նրանց քանակից էր կախված քեսեքչիի վաստակը։ Գիրացրած ամեն մի ոչխար կարող էր տալ 25—40 ֆունտ ճարպ և միջին թվով 12—16 ֆունտ նուրբ բուրդ։ Ինչպես նշեցինք, դեռ Ղրիմում հայ մաշկագործները մեծ քանակով մորթիներ էին մշակում, արտահանում մեշին, սաֆյան և այլ ապրանքներ։ Նախիջևանի շրջանում ևս հայ մաշկագործները պատրաստում էին մեծ քանակով լավ որակի ապրանքներ և արտահանում Եվրոպա։ Գարրիել Պատկանյանը իր Նոր-Նախիջևանի պատմության մեջ մեծ գովասանքով է խոսում նախիջևանցիների այդ արհեստի և նրա խոշոր դերի մասին[17]։ Մագիստրատի գործերից ևս տեսնում ենք, որ մաշկագործների միությունը մեծ դեր է խաղացել քա-

17 Գ. Պատկանյան, Նոր-Նախիջևանի պատմություն, Ն. Նախիջևան, 1917, էջ 49։

զաքի տնտեսության մեջ։ Պատկանյանի ասելով, թանկարժեք ոտնամանների համար պատրաստված գույնզգույն փափուկ կաշվեղենը Եվրոպայում մեծ հաջողություն ուներ։

Սակայն սալդաններում մորթված ոչխարների թիվը այնքան մեծ էր, որ մեծ քանակով հում մորթիներ էլ ծախվում էին օտարազգի վաճառականներին, որոնք տանելով իրենց երկրները, պատրաստում էին եվրոպական ճաշակի կաշվեղեն ապրանքներ։

Երբ առաջացավ նուրբ բրգի մեծ պահանջը և ոչխարատերերը ստիպված եղան պահել միմիայն իսպանական ցեղի ոչխարներ, ոչխարատերերը սկսեցին քեսեքի համար չոկված ոչխարները տալ քեսեքչիներին միմիայն գարնանը՝ բուրդ խուզելուց հետո։ Իսպանական ոչխարները երկրորդ անգամ չէին խուզում, բուրդը վրան քշում էին սալդան։ Բուրգը ստանում էր մորթին գնողը։ Բրգի պատճառով շատ բարձրացավ և մորթիների գինը։ Իսպանական ոչխարների մորթիները ծախում էին 3 ռ. 50 կոպեկից մինչև 4 ռ. 50 կ.։ Իսպանական ոչխարների չլվացած բրգի փութը արժեր 11—12 ռ.։

Անցյալ դարի առաջին կեսում Դոնի ափին, Կանաչ կղզու վրա Նախիջևանցի վաճառական Գաբրիել Մելքոնով-Էզեկովը հիմնեց բուրգ մաքրելու և լվանալու մեծ գործարան։ Դա իր տեսակի մեջ առաջին գործարանն էր։ Այդ գործարանը, որ մեծ հաջողություն ունեցավ, գնում էր բուրգը, լվանում և ծախում մեծ վաստակով։ Բացի այդ, նա առանձին վարձով լվանում էր ուրիշների բուրդը։ 60-ական թթ. Ռոստովում ևս բացվեց մի այդպիսի գործարան։ 70-ական թթ. Մելքոնով-Էզեկովը համարվում էր Նոր-Նախիջևանի ամենահարուստ վաճառականը։ Բուրդը և բրգազուրկ մորթիները նա ծախում էր արտասահմանի համար։ Մորթիների մի զգալի մասը գնում էին հայ մաշկագործները և վերամշակում։ Կանաչ կղզու լվացարանի մոտ հիմնվեց տեխնիկապես կատարելագործված մաշկագործարան, որը գնում էր քեսեքչիների մորթիները, բուրգը առանձին մշակում, իսկ մորթիներից պատրաստում էր մեծ քանակով խրոմ, շեվրո և շատ ուրիշ տեսակի ապրանքներ։ Գործարանը ուներ համառուսական նշանակություն։ Նա ապրանքներ էր մատակարարում զինվորական իշխանություններին և այլ պետական հիմնարկների։

Նույն Մելքոնով-Էզեկովը ժառանգական իրավունքների համաձայն տիրացավ Նոր-Նախիջևանի ամենամեծ և ամբողջ Ռուսաստանում հռչակված Խաչկուռուզյանի օճառի գործարանին, որ մեծ քանակով գործածում էր սալդանների երկրորդ տեսակի ճարպը։

Էզեկյանը, որ լավ ճանաչում էր բոլոր հայ քեսեքչիներին, կապ հաստատեց նրանց հետ և սկսեց բոլոր ցանկացողներին նախսրոք վճարել գալիք տարվա ճարպի, բրդի և գլխավորը՝ մորթիների արժեքի որոշ տոկոսը։ Քառորդ դարից ավելի հայ քեսեքչիների մեծ մասը օգտվում էր այդ վարկից և աշնանը շուկայի գնով սալդանների ապրանքը տալիս Էզեկյանին։

Մելքոնյան-Էզեկյանների վարկը մեծ զարկ տվեց քեսեքների գործի զարգացմանը։ Առևտրական կապիտալը շաղկապում էր մաշկագործարանը, լվացարանը, օճառի գործարանները սալդանների, քեսեքչիների և ոչխարապահությամբ զբաղվողների գործերի հետ։

Ամենակարող կապիտալի կենտրոնաձիգ ուժերը իրեն էին հպատակեցնում մանր քեսեքչիներին։ Վարկի շնորհիվ քեսեքների գործով սկսեցին զբաղվել շատ գյուղացիներ։

* *
*

Որքան է եղել սալդաններում մորթված ոչխարների թիվը ամեն տարի, մենք հաստատ չգիտենք։ Պաշտոնական տվյալներ չունենք, քաղաքային արխիվի նյութերում ևս բավարար պատասխան չգտանք։ Քաղաքային ինքնավարությունը, գործ ունենալով միմիայն սալդանատերերի և ոչ թե քեսեքչիների հետ, մորթված ոչխարների թիվը չի ցուցակագրել։

Մեր ձեռքի տակ կան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի աշխատակից Վ. Բարխուդարյանի՝ Լենինգրադի կենտրոնական արխիվում հայտնաբերած հետևյալ տվյալները։ Տագանրոգի քաղաքապետի պաշտոնական հաշվետու զեկուցման համաձայն, 1815 թ. Նոր-Նախիջևանում եղել է 35000 ոչխար, իսկ գյուղերում՝ 9500 գլուխ[18]. 1824 թ. ըստ նույն հաշվետվության եղել է՝ Նախիջևանում՝ 27500 ոչխար, իսկ գյուղերում՝ 29792 գլուխ[19]։

Այս թվերը շատ հեռու են ճիշտ լինելուց։

Գյուղերի 9500 գլուխը 1824 թ. հասել է 29792 գլխի, գա հասկանալի աճ է։ Բոլորովին ան-

---

18 ЦГИАЛ, ф. 1281, оп. 11, д. 1341, л. 388.

19 Նույն տեղում, д. 136, л. 26.

հավատալի է քաղաքի ոչխարների թվի պակասելը։ Դա բացատրվում է նրանով, որ քաղաքի ոչխարապահների ոչխարները գտնվում էին քաղաքից դուրս, ագարակներում և կամ կապալով վերցրած կալվածքներում։ 27500 ոչխար, երևի, գտնվել է քաղաքում և կամ քաղաքի հողերի վրա, նրա արոտատեղիներում։ Մեկ լավ հայտնի է, որ այդ շրջանում միմիայն Խալիպյանը իր չորս ագարակներում պահել է տասնյակ հազարներով մայր ոչխարներ։ Սախավ Պետրոսը ունեցել է նրանից շատ ավելի, իսկ Տրապիզոնցյանը նրանից էլ ավելի։

Սալդանները իրենց գոյության 140 տարվա ընթացքում անշուշտ ենթարկվել են տատանումների։ Սկզբում, երբ հարավային Ռուսաստանում երկրագործությունը քիչ էր զարգացած և դաշտերի մեծ մասը ազատ էր, ժողովրդի տնտեսության գլխավոր արդյունքը անասնապահությունն էր տալիս։ XIX դարի 60-ական թթ. սկսում են զարգանալ հողագործությունը, հատկապես ցորենի մշակությունը, արդյունաբերությունը։

XIX դարի երկրորդ կեսում արագորեն զարգանում է կապիտալիզմը։ Կենտրոնական Ռուսաստանը հարավային Ռուսաստանի և Կովկասի վրա նայում էր որպես իր գաղութների վրա, որոնք սպառում էին իր ապրանքները և մատակարարում մեծ քանակով հումք[20]։

Դոնի մարզը երկար ժամանակ խոշոր արդյունաբերական ձեռնարկների կողքին տեղ էր տալիս մանր արդյունաբերական գործերին։ Դա բացատրվում էր նրա տնտեսության ագրարային բնույթով։

1890 թ. գոյություն է ունեցել 19 սալդան[21]։ Արդյունաբերության զարգացումը ուժեղ ազդեցություն ունեցավ ոչխարարուծության վրա։ 1880 թ. ոչխարարույծ Ֆիլիբերտը ուներ իսպանական ցեղի 40000 մայր ոչխար, Գուտովսկին՝ 25000, Իլովայսկին՝ 16500 մայր ոչխար[22]։ Այդ տնտեսությունները հարավային Ռուսաստանում ունեին խիստ մեծ նշանակություն։ Նրանք ամեն տարի հայ քեսեքչիներին ծախում էին մեծ քանակով գիրացման ոչխարներ։ Իսպանական ոչխարները ծախվում էին միմիայն քեսեքչիներին, մսավաճառները չէին գնում, որովհետև սպառողները չէին գնում նրանց ճարպաթաթախ միսը։ Դմակավոր ոչխարի միսը համեղ է, որովհետև նրա ճարպը հավաքվում է գլխավորապես դմակների մեջ։ Կապիտալիզմի զարգացումը, հողագործության աճը, ցորենի մեծաքանակ մշակումը և արտասահմանյան շուկաները ոտք դնելը չվնասեցին հայ քեսեքչիներին։ Կապիտալիստների ոչխարարուծությունը ամեն տարի մեծ քանակով ոչխարներ էր մատակարարում քեսեքչիներին։

Մեզ, որպես նախկին քաղաքային դումայի պատգամավորի և նրա քննիչ հանձնաժողովի անդամի, ծանոթ է սալդանների գործը։

Մեծ կալվածատեր, խոշոր ոչխարարույծ, վաղեմի սալդանատեր, անցյալ դարի 90-ական թթ. սկսած քանի-քանի անգամ քաղաքագլուխ ընտրված Քերովբե Միքայելի Պոպովը պատմեց մեզ, որ նա 50 տարի եղել է սալդանատեր, որ 35 տարուց ավելի նա ամեն տարի մորթել է 50-ական հազար իր ոչխարները և 20 հազար գլխից ոչ պակաս ուրիշների ոչխարներ։ Սալդանների թիվը միշտ 12-ից պակաս չի եղել, իսկ ավելի՝ եղել է։ Նրա ասելով միմիայն Տրապիզոնցյան վաճառականը մորթել է իր սալդանում շուրջ հարյուր հազար ոչխար։

Տրապիզոնցյանի գործը շարունակվել է մինչև 1886 թ.։ Պոպովի կարծիքով սալդաններում մորթված ոչխարների թիվը եղել է ութ հարյուր հազարից շատ ավելի։ 35 տարի քաղաքային վարչության անդամ ծառայած, քաղաքի ամբողջ տնտեսությունը վարող, հայ գրականության ծանոթ Հարություն Խատամյանը 19 տարի քաղաքագլուխ ընտրված Մինաս Բալարանյանը, սպանդանոցի անասնարույծ Սոցևիչը և շատ ծերեր միաբերան հաստատում էին, որ սալդաններում մորթված ոչխարների թիվը եղել է մոտ մի միլիոն գլուխ։

Մեր օրերին, XIX դարի վերջերին և XX դարի սկզբին Նախիջևանի ամենախոշոր քեսեքչիները մորթում էին 50 հազար գլխից ոչ պակաս։

Սալդանները և քեսեքները եղել են առևտրական անասնապահության եկամտաբեր ճյուղերից և ունեցել են մեծ նշանակություն Նոր-Նախիջևանի շրջակա գյուղերի ժողովրդի պարենավորման գործում, ազդել են Դոնբասի և Հյուսիսային Կովկասի ոչխարարուծության վրա և իրենց արտադրած ապրանքներով կապել նրանց արևելյան և արևմտյան երկրների հետ։

---

20 Տե՛ս А. И. Козулов, Народное хозяйство Дона до и после Октября, Ростов, 1947.

21 Տե՛ս ЦГВИА, ф. 4, оп. 54, д. 54, л. 46.

22 Տե՛ս И. П. Хлыстов, Дон в эпоху капитализма, Ростов, 1962, էջ 92։